Ճ Ծար • Ես • 3 • Ես • 4 • Ժաղ • ը • 3 • Մէկ • ե • 16 •

ԳԼ· ԼՈ

1 Գթութեան եւ բարեխառնութեան վայով Լեմուէլին թագաւորիս· 2 Վասն որդւոյ մերոյ ասացեալ· եւ որդւոյ նեղութեանցդ· 3 Մի տուր զկանայս քո զուժ, եւ զկորուստ թագաւորաց կործանեալ։

4 Ո՛չ Լեմուէլ, ո՛չ թագաւորին համար, ո՛չ թագաւորաց համար ըմպել գինի, եւ ո՛չ իշխանաց համար ըմպել գինեաց։ 5 Զի մի՛ թերեւս ըմպեսցեն եւ մոռասցին զիրաւունսն, եւ խեղդեսցեն զդատաստան ամենայն որդւոց աղքատաց։ 6 Տուք գինի տրտմելոյ, եւ գարի՝ որ ունիցի զանձն դառնացեալ։ 7 Ըմպեսցէ եւ մոռասցի զաղքատութիւնն իւր, եւ զչարչարանսն իւր ոչ յիշեսցէ ևս։ 8 Բա՛ց զբերանդ քո վասն համարձակելոյ, եւ վասն դատաստանի ամենայն որդւոց մահուան։ 9 Բա՛ց զբերանդ քո, եւ դատեա՛ զարդարութեամբ, եւ արա՛ իրաւունս աղքատաց եւ տնանկաց։

10 Զկնի զայսոսիկ զի՞ կին գտանիցէ զարի։ Զի գինն գոհարեղէնից շատ է։ 11 Սիրտ ամուսնոյ իւրոյ ապաստանի ի նմա, եւ ոչ կարօտանայ ամենեւին։ 12 Հատուսցէ նմա զբարիս, եւ ոչ զչարս զամենայն աւուրս կենաց իւրոց։ 13 Խնդրեաց զգեստս եւ զգեցաւ, եւ զգեստք նորա ի բիսոսէ եւ ի ծիրանեաց։ 14 Եղեւ իբրեւ զնաւս վաճառականի, որ ի հեռաստանից բերէ զհաց իւր։ 15 Եւ յարուցեալ ի գիշերի, ետ կերակուր տանն իւրոյ, եւ գործ աղախնեաց իւրոց։ 16 Խորհեցաւ զագարակ, եւ առ զնա, եւ յգործոց ձեռաց իւրոց տնկեաց զայգի։ 17 Զգեցաւ զօրութեամբ զմէջս իւր, եւ զօրացոյց զբազուկս իւր։ 18 Ետես եւ ճանաչեաց, զի բարի է առեւտուր նորա, ոչ մարեսցի զմոմ նորա գիշերի։ 19 Զձեռս իւր ետ ի գործ, եւ մատունք նորա բռնեցին զհարկանելի։ 20 Զձեռս իւր ետ աղքատի, եւ զբազուկս իւր ետ տնանկի։ 21 Ոչ երկնչի զտան իւրոյ ի ձեան, զի ամենայն տունք նորա զգեցան կրկնակի։ 22 Արար իւր ծածկոյթս, զգեստ բիսոսի եւ ծիրանի է հանդերձ նորա։ 23 Ճանաչի առ դրունս քաղաքի այր նորա, յորժամ նստի ընդ երիցանս երկրի։ 24 Արար սաւան եւ ետ վաճառականաց, եւ գօտիս ետ վաճառականի։ 25 Զօրութիւն եւ գեղեցկութիւն զգեստ նորա է, եւ ուրախ լիցի յաւուր յետնումն։ 26 Բերան իւր բացաւ իմաստութեամբ, եւ օրէնք ողորմութեան ի լեզուի նորա։ 27 Հայեցաւ զճանապարհս տանն իւրոյ, եւ զհաց ամօթոյ ոչ կերիցէ։ 28 Յարեան որդիք նորա եւ կոչեցին զնա երանի, եւ այր նորա եւ գովեաց զնա։ 29 Բազումք դստերաց ժողովեցին զհարստութիւն, դու անցեր զամենեսեան։ 30 Սուտ է շնորհք, եւ ունայն է գեղեցկութիւն, կին որ երկնչի ի Տէր, նա կեցուսցէ։ 31 Տո՛ւք նմա ի պտղոց ձեռաց նորա, եւ գովեսցեն զնա ի դրունս գործք նորա։

ա Գլ· ա· ա։ բ Ես· խթ· ։ գ Գլ· բ· ։ դ Ոբ· ամ· ։ ե Ամ· ժգ· ։ զ Բն· ժ· ։ է Ել· ժ· ։ ը Ել· ժ· ։ թ Ել· ժ· ։ ժ Ել· ժ· ։ ի Ել· ժ· ։ լ Ել· ժ· ։ խ Ել· ժ· ։ ծ Ել· ժ· ։ կ Ել· ժ· ։ հ Ել· ժ· ։ ձ Ել· ժ· ։ ղ Ել· ժ· ։ ճ Ել· ժ· ։ մ Ել· ժ· ։ յ Ել· ժ· ։ ն Ել· ժ· ։ շ Ել· ժ· ։ ո Ել· ժ· ։ չ Ել· ժ· ։ պ Ել· ժ· ։ ջ Ել· ժ· ։ ռ Ել· ժ· ։ ս Ել· ժ· ։ վ Ել· ժ· ։ տ Ել· ժ· ։ ր Ել· ժ· ։ ց Ել· ժ· ։ ւ Ել· ժ· ։ փ Ել· ժ· ։ ք Ել· ժ· ։ օ Ել· ժ· ։ ֆ Ել· ժ·

ԳԻՐՔ ԺՈՂՈՎՈՂԻ

ԳԼՈՒԽ Ա.

1 Ժողովողը կը յայտնէ թէ բոլոր մարդկային բաները ունայն
նաեւ թէ են։ 4 սերնդեան ամէն սերունդները անդադար
կ'աշխատին, 9 բայց նոր բան մը յառաջ չեն բերեր, ու ամէն
հին բաներն ալ կը մոռցուին։ 12 Ե թէ ինչը այնպէս գտած
է խնամութեան քննութիւններով։

1 Երուսաղէմի մէջ թագաւորող Դաւիթի որ-
դւոյն՝ Ժողովողին խօսքերը։

2 Ունայնութիւն ունայնութեանց, ըսաւ Ժո-
ղովողը,
Ունայնութիւն ունայնութեանց, ամէն բան
ունայնութիւն է։

3 Ինչ օգուտ կ'ունենայ մարդ
Արեւուն տակը քրտնած բոլոր աշխատանքին։
4 Ազգ կ'երթայ և ազգ կու գայ,
Բայց երկիրը միշտ կը կենայ։
5 Ընդ արեւը կը ծագի ու արեւը կը մտնէ,
Եւ իր ծագած տեղը արագաթռիռով կը գառնայ։
6 Հովը դէպ ի հարաւ կ'երթայ,
Ու դէպ ի հիւսիս կը պտտի.
Ե- հովը աս դին ան դին պտտելով
Կ'երթայ, իր շրջանները նամնիատ կը դառ-
նայ։
7 Ամէն գետերը ծովը կ'երթան,
Բայց ծովը չի լեցուիր.
Ամէն տեղ որ գետերը կ'երթային,
Նորէն հոն կ'երթան։
8 Ամէն խօսքերը կը հոգնին.
Մարդս խօսելու կարող չէ.
Աչքը տեսնելով չկշտանար,
Ու ականջը լսելով չի լեցուիր։
9 Ինչ որ եղած է, նոյնը պիտի ըլլայ,
Ու ինչ որ գործուած է, նոյնը պիտի գոր-
ծուի.
Եւ արեւուն տակը բնաւ նոր բան մը չկայ։
10 Կ'ոյ արդեօք անոնկ բան մը
Որուն համար կրնայ ըսուիլ, Ահա տեսիկա նոր է.
Ան- մեզմէ առաջ եղած դարերուն մէջ
Անիկա արդէն եղած էր։
11 Առջի բաներուն յիշատակը չկայ,
Ու նաեւ ըլլալու բաներուն ալ
Ետքը եկողներուն մէջ յիշատակը պիտի չըլ-
լայ։

12 Ես Ժողովողս Երուսաղէմի մէջ
իսրայէլի վրայ թագաւոր եղայ,
13 Ե իմ սիրտս երկինքի տակը բոլոր եղածները
խնամութեամբ փնտռելու ու քննելու տուի.
Աստուած աս չար զբաղմունքը մարդոց որ-
դիներուն տուաւ,
Որ անով զբաղին։
14 Արեւուն տակը բոլոր գործուած գործերը
տեսայ,
Եւ ահա ամէնն ալ ունայնութիւն ու հոգիի
տանջանք է։
15 Ան որ ծուռ է՝ չկրնար շտկուիլ,
Ու ան որ պակաս է՝ չկրնար համրուիլ։
16 Ես իմ սրտիս մէջ խօսեցայ ու ըսի,
Ահա ես մեծցայ, ու իմաստութիւն առայ
Երուսաղէմի մէջ ինծմէ առաջ եղողներուն
ամէնէն աւելի.
Եւ իմ սիրտս շատ իմաստութիւն ու գիտու-
թիւն տեսաւ։
17 Ես իմ սիրտս իմաստութիւնը ճանչնալու,
Ու խենթութիւնը և յիմարութիւնը գիտնա-
լու տուի.
Հասկցայ որ ասիկա ալ հոգիի տանջանք է։
18 Վասն զի շատ իմաստութեան մէջ շատ տրտ-
մութիւն կայ.
Ու ով գիտութիւնը աւելցնողը՝ ինչը կ'ա-
ւելցնէ։

ԳԼ. Բ

1 Մարդկային կեանքը ունայնութիւնը գրասենչ մէջ։ 12 Թէ ևս
իմաստութիւնը յիմարին ալ կ՝ ամէնքն ալ մէկ
է։ 18 Մարդկային աշխատութիւններուն ունայնութիւնը։ որ
երթալ կը հասնի։ չեն գիտեր թէ ուրուն համար է։ 24 Մէկ
աշխատանքին պատ որ վայելուին պէս ալ մէկ բան չկայ։ բայց
ան ալ Աստուծոյ ձեռ պարգեւն է։

1 Ես՝ իմ սրտիս մէջը ըսի, եկուր հիմա ու-
րախութեան միջոցով քեզ փորձեմ։
Ուստի բարի բաներ վայելէ։
Եւ ահա տեսիկա ալ ունայնութիւն է։
2 Ծիծաղին համար ըսի թէ ցնծալը է,
Ե ուրախութեան համար՝ թէ Ասոր ըրածը
ի՞նչ է։

3 Սրտիս մէջ խորհեցայ որ մարմինս գինեով
զուարճացնեմ,
Եւ իմաստութեան առաջնորդութեամբը ան-
միտութիւնը ճանչնամ,

= Հոր · 12· ԳԼ· ե· 1·
27· ժբ· 8· 9· 10·
Բ Սաչ· լԲ· 5· 6·
կբ· 9· Ահա· 4·
ԳԼ· ժբ· 8·
Դ Համմ· բ· 30·
Է Գբ· բ· 22· գ· 9·
Ը Սաչ· Ահ· 5· ՀամԲ·
90·
Թ Սաչ· ժԲ· 5· 6·
Ժ Ցաչ· գ· 8·
ԺԱ Ցար· լբ· 10· Սաչ·
Ի Գբ· բ· 22· գ· 9·
ԺԲ· 8· 9·
ԺԳ Կամբաներըը կոչ-
նեն·
ԺԴ Աւտ· ԺԲ· 20·
ԺԵ Ցաչ· գ· 12· 13·
ԺԶ Ես· գ· 18· ԳԼ·
գ· 10·
ԺԷ Կամ հովի համար
աշխատութեան
ԺԸ ԳԼ· ե· 15·
ԺԹ գԹաղ· գ· 12· 13·
Ի Գբ· 1·
Լ Ծան· գ· 18· ԳԼ·
գ· 30· ժ· 7· 23·
ԼԱ ԳԼ· բ· 9·
ԼԲ ԳԼ· բ· 3· 18· ե· 23·
23· ա Թես· ե· 21·
ԼԳ ԳԼ· ԺԲ· 13·
ԼԴ ԳԼ· ե· 18·
ԼԵ Ղ.Ե· ԺԲ· 19·
ԼԶ Ցես Նա· ԺԲ· 11·
ԼԷ Աւտ· Ժգ· 13·
ԳԼ· է· 6·
ԼԸ ԳԼ· ա· 17·

Որ տեսնեմ թէ ինչ է մարդոց որդիներուն բաժին՝
Որ կրնան ընել երկինէ տակը
իրենց կենացը բոլոր օրերուն մէջ։
4 Մեծ գործերը ըրի.
ինծի տուներ չինեցի, — ինծի այգիներ տընկեցի.
5 ինծի պարտէզներ և դրախտներ չինեցի,
Ու անոնց մէջը ամէն տեսակ պտուղ բերող ծառեր տնկեցի.
6 ինծի ջուրի աւազաններ չինեցի,
Որ անոնցմէ ծառ բուսցընող անտառը ոռոգուի.
7 Ծառաներ ու աղախիններ առայ,
Եւ իմ տանս մէջ ծնած ծառաներ ունեցայ.
Ու չատ արջառներ և հօտեր ունեցայ՝
ինծմէ առաջ Երուսաղէմի մէջ եղողներուն ամէնէն աւելի։
8 Նաև ինծի արծաթ ու ոսկի
Եւ թագաւորներու ու գաւառներու գանձեր դիզեցի.
ինծի այր և կին երգեցողներ առայ,
Ու մարդոց որդիներուն զուարճութիւնները ՚ե ամէն տեսակ չքեղութիւն։՚
9 Եւ ինծմէ առաջ Երուսաղէմի մէջ եղողներուն Ամէնէն մեծ եղայ ու բարգաւաճեցայ.
իմաստութիւնս ալ իմ քովս կը կենար։
10 Եւ իմ աչքերուս ամէն ցանկութիւնը անոնց մէ չարգիլեցի,
Ո՛ր իմ սիրտս ամէն ախ՝ ուրախութենէ զուրկ չձգեցի.
Հապա իմ սիրտս իմ բոլոր աշխատութիւններէս ուրախացաւ.
Եւ ինծի բոլոր աշխատութիւններէս բաժինս ասիկա էր։
11 Ու ես՝ իմ ձեռքերուս ըրած ամէն գործերուն,
Ու ընելու համար իմ քրտնած ամէն աշխատանքիս նայեցայ,
Եւ ահա ամէնը տունայնութիւն ու հոգիի տանջանք էր,
Ու արեւուն տակը օգուտ չկար։

12 Եւ ես դարձայ իմաստութիւնը տեսնելու,
Նաև յիմարութիւնները ու անմտութիւնը.
Վասն զի թագաւորին ետեւէն եկող մարդը ի՞նչ կրնայ ընել.
ինչ որ արդէն ըրած են։
13 Ու տեսայ որ իմաստութիւնը անմտութենէն օգտակար է,
ինչպէս որ լոյսը խաւարէն օգտակար է։
14 Իմաստունին աչքերը իր գլխուն վրայ են,
իսկ անմիտը խաւարի մէջ կը քալէ.
Բայց ես գիտցայ որ

Ե Գ Թագ. Բ. 11. | Թիւոց. Թ. 9.
Թ. 15. 14. 21. Եւ.
• Կամ մեծ առաջա-
Ե Գր. Ա. 10.
Ե Գր. Գ. 22. Ե. 18.
Ե Գր. Ա. 3. 14.
Ե Գր. Ա. 17. Ե. 22.

Անոնց ամէնուն պատահած դիպուածը մէկ է։
15 Ամառները իմ սրտիս մէջ ըսի,
Որովհետև անմիտին պատահածը ինծի ալ պիտի պատահի,
Ուրեմն ես ինչո՞ւ համար աւելի իմաստուն եղայ։
Ա՛ս պատճառաւ իմ սրտիս մէջ ըսի որ ասալ ունայնութիւն է։
16 Վասն զի ինչպէս անմիտին՝ նմանապէս իմաստունին ալ
Յաւիտեան յիշատակը չկայ.
Ինչու որ հիմա եղած բաներուն ամէնը
Ապագայ ժամանակին մէջ պիտի մոռցած է.
Ու իմաստունը ի՞նչպէս կը մեռնի.
Անմիտին պէս։
17 Ասոր համար ատ կեանքէս զզուեցայ,
Վասն զի արեւուն տակը եղած գործերը ինծի գէշ երեցան,
Քանզի ամէնը ունայնութիւն ու հոգիի տանջանք է։
18 Եւ ես արեւուն տակը քրտնած բոլոր աշխատութենէս զզուեցայ,
Քանզի ինծմէ ետքը գալու մարդուն պիտի թողում զայն։
19 Եւ ո՞վ գիտէ թէ անիկա իմաստուն պիտի ըլլայ թէ անմիտ.
Բայց պիտի տիրէ իմ բոլոր աշխատութիւնիս վրայ,
Որ արեւուն տակը աշխատեցայ,
Ու անոնց մէջը իմաստութիւն ցուցուցի.
Ասիկա ալ ունայնութիւն է։
20 Եւ ես դարձայ, որ արեւուն տակը քրտնած բոլոր աշխատանքիս վրայով
Իմ սրտէս յոյսս կտրեմ։
21 Վասն զի մարդ կայ որուն աշխատութիւնը իմաստութեամբ, գիտութեամբ և յաջողութեամբ կ՚ըլլայ,
Բայց անոր մէջ չաշխատող մարդուն չի՛ բաժին կու տայ.
Ասիկա ալ ունայնութիւն ու մեծ չարիք մին է։
22 Վասն զի մարդը արեւուն տակը քրտնած իր բոլոր աշխատանքին
Ու սրտին տանջանքին ի՞նչ օգուտ կ՚ունենայ։
23 Քանզի անոր բոլոր օրերը ցաւերով՝
Ու գործը տրտմութեամբ լեցուն են.
Անոր սիրտը գիշերը անգամ հանգստութիւն չգտներ.
Ասիկա ալ ունայնութիւն է։
24 Մարդս ուտելէն ու խմելէն
Եւ իր աշխատանքով իր հոգին զուարճացընելէն ի՛նչ աղկութիւն մը չունի.
Ես ասիկա ալ տեսայ որ Աստուծոյ ձեռքովը կ՚ըլլայ։

Ե Առակ. Ժե. 24.
Թ. 2. 3. 11.
Ե Սաղ. Խթ. 10.
Ե Սաղ. Խթ. 10. Գր.
Ե Գր. ա. 3. գ. 9.
Ե Ճոբ. ե. 7. Ժգ. 1.
Գր. գ. 12. 13. 22.
Ե. 18. գ. 18.

25 վասն զի *ինձմէ զատ՝ ոչ կրնայ ուտել,
եւ ոչ կրնայ զուարճանալ։
26 Քանզի Աստուա՛ծ իր առջեւը հաճելի եղող մարդուն
իմաստութիւն, գիտութիւն եւ ուրախութիւն
կու տայ.
Բայց մեղաւորին զբաղմունք կու տայ,
Որ անիկա Աստուա՛ծ ժողվէ ու դիզէ,
Որ Աստուծոյ առջեւը հաճելի եղողին տայ.
Անիկա ալ ունայնութիւն ու հոգիի տանջանք է։

ԳԼ. Գ

1 Ժամանակին փոփոխութիւններովը մարդոց աշխատութեանը վրայ ունայնութիւն կ՚ուշիայ։ 11 Աստուծոյ գործերուն մէջ գեղեցկացնութիւն մը կայ։ 16 ուրիշն վերջին որը Աստուած պիտի գատի մարդոց գործերը. Թէև հիմա անոնք անասունի պէս են։

1 Ամէն բանին ատենը կայ,
ու երկինքի տակը եղող ամէն †գործին ժամանակը.
2 ծնանելու ժամանակ եւ մեռնելու ժամանակ,
Տնկելու ժամանակ ու անկուածը խլելու ժամանակ,
3 Մեռցնելու ժամանակ եւ բժշկելու ժամանակ,
փլցնելու ժամանակ ու չինելու ժամանակ,
4 լալու ժամանակ եւ ծիծաղելու ժամանակ,
Ողբ բնելու ժամանակ ու կաքաւելու ժամանակ,
5 քարեր գետս ձեռնելու ժամանակ եւ քարեր ժողվելու ժամանակ,
Գրկելու ժամանակ ու †գրկելէն հեռանալու ժամանակ,
6 փնտռելու ժամանակ եւ կորսընցնելու ժամանակ,
Պահելու ժամանակ ու գետս ձգելու ժամանակ,
7 պատռելու ժամանակ եւ կարելու ժամանակ,
†Լռելու ժամանակ ու խօսելու ժամանակ,
8 Սիրելու ժամանակ եւ †ատելու ժամանակ,
Պատերազմի ժամանակ ու խաղաղութեան ժամանակ։

9 Վիշտացողին իր քրտնած աշխատանքէն
Ի՞նչ օգուտ կ՚ըլլայ։
10 †Տեսայ ան զբաղմունքը որ Աստուած մարդոց որդիներուն տուաւ,
Որ անով զբաղին։
11 Ամէնուն բան իր ժամանակին վայելուչ
բրաւ,
Եւ աշխարհս ալ անոնց սրտին մէջը դրաւ.
Բայց †Աստուծոյ բրած գործը
Սկզբէն մինչեւ վերջը գտնել
12 Ան †գիտեմ որ ուրիշ բնաւ
Ու կենդանութեան տանը ազկութիւն ընել
չէն՝ ի զատ՝
Ուրիշ ազկ բան մը չկայ անոնց մէջ։
13 Ու նաեւ †մարդուն ուտելը ու խմելը,
Եւ իր բոլոր աշխատութենէն բարիք վայելելը
Աստուծոյ պարգեւն է։
14 Գիտեմ որ Աստուծոյ ամէն բրածը յաւիտեան պիտի մնայ.
†Անոր վրայ բան մը աւելցնել, կամ անկ պակսեցնել կարելի չէ.
Եւ Աստուած †ընե՝ բրաւ, որ իր երկեղն վախնան։
15 †Ինչ որ եղած է՝ հիմա ալ կայ.
Ու ինչ որ պիտի ըլլայ՝ արդէն եղած է.
Եւ Աստուած անցածը կը փնտռէ։
16 Ու նաեւ արեւուն տակը տեսայ որ †գատաստանի տեղ՝ ամբարշտութիւն,
Եւ արդարութեան տեղ անօրէնութիւն կար։
17 Ես իմ սրտիս մէջ ըսի թէ †Աստուած պիտի դատէ արդարը ու ամբարիշտը.
Վասն զի ամէն գործութիւն ու ամէն գործ ժամանակ ունի հոն։

18 Ես իմ սրտիս մէջ ըսի
Մարդոց որդիներուն վիճակին վրայով,
Թէ Աստուած զանոնք պիտի փորձէ.
Ու պիտի տեսնեն որ իրենք անասուններ են։
19 Վասն զի մարդոց որդիներուն պատահածը
Եւ անասուններուն պատահածը մէկ է.
Մեկը ինչպէս կը մեռնի, միւսն ալ այնպէս կը մեռնի.
Ու ամէնուն չունչը մէկ է.
Եւ մարդը անասունէն աւելի բան մը չունի,
Վասն զի ամէնը ունայնութիւն է։
20 Ամէնը մէկ տեղ կ՚երթայ.
†Ամէնը հողէն եղաւ, ու ամէնը հող կը դառնայ։
21 Ո՞վ գիտէ թէ մարդոց որդիներուն հոգին վեր կ՚ելլէն,
Եւ անասնոց որդիները վար գետինը կ՚իջնեն։
22 Ու տեսայ որ մարդս իր գործքերովը ուրախ ըլլալէն †զատ
Ուրիշ ազկութիւն մը չունի,
†Քանզի անոր բաժինը ան է.
Վասն զի ո՞վ պիտի տանի զանիկա որ տեսնի
Թէ իրմէ ետքը ինչ պիտի ըլլայ։

ԳԼ. Դ

1 Մարդուն ունայնութիւնը կ՚ուշիայ հարստահարութեամբ.

* Կամ առանց Ընար
ե Բար. Ի. 27.
ը Գաղ. Ե. 16. 17։ Ասակ. Ի. 8։
թ Ելք. Ե. 5։ Կար. Ե. 5։
ժ Ելմր. 17։ Գաղ. Բ. 6։
ի Կամ գիտասուր.
ղ Գէ. ս. 3։
ի Գէ. ս. 13։
ն Գէ. ս. 9։
շ Գէ. Ե. 8։
ո Հասմ. Բ. 6. 7։ Ե. 8։ Ա. Կոր. Ե. 5։ Ես. Բ. Կար. Ե. 13։
ջ Ելմր. 22։
ռ Գէ. ժ. 7։
ս Ելմր. 12։ Գէ. Բ. 24. Ե. 18։ Ժա. 9։
վ Գէ. Բ. 10։
տ Գէ. Գ. 13։ Ը. 7։ Ժ. 14։

4 Նախանձով. 8 Ծուլութեամբ. 7 ագահութեամբ 9 առանձնակեցութեամբ. 13 կամակորութեամբ.

1 Ես ևս դարձայ ու տեսայ
Արևուն տակը եղած բոլոր †զրկանքները.
Եւ ահա զրկուածներուն արցունք կար,
Բայց անոնք մխիթարող չունէին.
Ու անոնց զրկանք բնաղներուն ձեռքը ոյժ կար,
Բայց անոնց մխիթարութիւն տուող չկար.
2 †Ուստի ես մեռածները արդէն մեռածները
Միտքէս հինս ապրող կենդանիներէն աւելի գովեցի.
3 †Բայց ան որ մինչև հիմա եղած չէ՝ երկուքէն ալ ազնիւ է,
Վասն զի անիկա արևուն տակը եղած չարութիները չտեսաւ.
4 Ու ես ամէն աշխատութիները
Եւ ամէն յաջող գործերը տեսայ,
Որ անոնց համար մարդ իր ընկերին կը նախանձի.
Ասիկա ալ ունայնութիւն ու հոգիի տանջանք է.
5 †Անմարթ իր ձեռքերը կը ծալէ,
Ու իր միսը կ'ուտէ.
6 †Աւելի ազնիւ է մէկ լեցուն ձեռքը հանգըստութեամբ,
Քան թէ երկու լեցուն ձեռքը՝ որ աշխատանքով ու հոգիի տանջանքով է.

7 Եւ ես դարձայ ու տեսայ տակը ունայնութիւն տեսայ.
8 Մէկ մարդ մը կայ որ երկրորդ չունի,
Ոչ տղայ ունի և ոչ եղբայր.
Բայց անոր ամէն աշխատութիները վախճան չունի,
Ու անոր հաչքերը հարստութեամբ չեն կշտանար.
ԵՒես չեմ ըսեր համար կ'աշխատիմ,
Ու իմ հոգիս բարիքէ կը զրկեմ.
Ասիկա ալ ունայնութիւն ու չար զբաղմունք է.
9 Երկուքը մէկէն ազնիւ է,
Վասն զի անոնց աշխատանքը ազնիւ վարձք ունի.
10 Քանզի թէ որ իյնան՝ մէկզմէկ կը վերցընեն.
Բայց վա՛յ իյնող մէկուն՝
Որ զինքը վերցընող երկրորդ մը չունի.
11 Ու երկու մարդ դէսէն զգեստով կը տաքնան.
Բայց մինակը ի՞նչպէս կրնայ տաքնալ.
12 Եւ թէ որ մէկը անոնց բռնութիւն ընէ,
Երկուքը կրնան անոր դէմ դնել.
Ու երեքպատիկ դերձանը դիւրաւ չկոտրուիր.

13 Ազնիւ է աղքատ ու խնամուն տգան,
Քան թէ ծեր ու անմիտ թագաւորը՝
Որ ալ չդիտեր խրատուիլ.
14 Քանզի դէպ բանտէն կ'ելլէ՝ որ թագաւոր է,
Բայց ուրիշ մը որ †թագաւոր ծնած է, աղքատ կ'ըլլայ.
15 Ցնծայ արևուն տակը քալող ամէն կենդանի՝
Նէրը
Ան տգան հետ՝ որ յարուցեալ երկրորդն էր,
Ու անոր տեղը պիտի անցնէր.
16 †Անոնց առջևը կեցող բոլոր ժողովուրդը անթիւ էր.
Սակայն եւս ետքինները անկէ պիտի չուրախանան.
Ասիկա ալ ունայնութիւն ու հոգիի տանջանք է.

ԳԼ. Ե

1 Աստուածային պաշտօնը կատարելուն մէջ. 8 Տիրասիրութեան գէմ տրտնջելու մէջ. 9 և Տիրասիրութեան մէջ ունայնութիւններ. 18 Տիրասիրութեան մէջ երջանկութիւնը Աստուծոյ պարգեւն է.

1 Երբոր Աստուծոյ տունը կ'երթաս, †տարբեր զգուշութիւն ըրէ.
Եւ աւելի մօտիկ ընելու մտածելիք,
†Քան թէ անմիտներու զոհ մատուցանելու.
Վասն զի անոնք չեն գիտեր թէ չարութիւն կ'ընեն.
2 Բերնովդ մի՛ աճապարեր,
Եւ քու սիրտդ Աստուծոյ առջևը խօսք հանելու չարտորայ.
Քանզի Աստուած երկինքն է, ու դուն երկրի վրայ ես,
Անոր համար †քու խօսքերդ քիչ ըլլան.
3 Վասն զի երազը շատ զբաղմունքէն յառաջ կու գայ,
Ու †շիմարին ձայնը՝ շատ խօսքերէն.

4 †Երբոր Աստուծոյ ուխտ կ'ընես,
Զանիկա կատարելը մի ուշացներ.
Քանզի Աստուած անհաւատներուն չհաճիր.
Ուրեմն ուխտդ կատարէ.
5 †Աղէկ է որ ուխտ չընես,
Քան թէ ուխտ ընես ու չկատարես.
6 Թող մի տար որ քու բերանդ մարմնոյդ մեղք գործել տայ,
†Եւ հրեշտակին առջևը միտքեր թէ սխալանք եղաւ.
Ինչո՞ւ Աստուած քու խօսքերդ համար բարկանայ,
Ու ձեռքերուդ գործքը ապրէ.
7 Վասն զի երազներուն շատութեանը մէջ
Եւ խօսքերուն շատութեանը մէջ
Ունայնութիւններ ալ կայ.

= Գլ. գ. 16. ե. 8. † Ճոբ. գ. 11. եռ. 21. † Գլ. գ. 5. † Առակ. գ. 10. թագ. 33.

Առակ. ժե. 16. 17. ժգ. 8. Առակ. իե. 29. ա Ճոխ. ր. 16. Սապ. լԹ. 6. Կամ իր թագաւորութեան.

† Կամ Անծանօթ աստուած եղող.

= Տես Եզ. գ. 5. Եփ. ա. 18. եռ.

† Առակ. ժ. 19. Մաս. գ. 7. † Առակ. ժ. 19. † Ելս. ր. 3. ր Օր. իգ. 21. 22. 23. Սապ. ե. 14. Հգ.

11. Սապ. իգ. 13. 14. Առակ. ի. 25. Գաղ. ե. 4. ա Կոր. ժա. 10.

Քայց Տ֊ր֊ուն Աստուծմէ՛ վախցիր ։
8 Թէ որ գաւառի մէջ ֊աղքատին եղած զբօ֊
քանքը
Ու իրաւանց և արդարութեան ֊Ծառիլը տեսնես ,
Ող բանիս վրայ մի զարմանար ։
Վասն զի ֊բարձրերուն վրայ Բարձր Հզորը կը դիտէ ։
Եւ ասոնցմէ Բարձրը կայ ։
9 Երկիրը ամէնուն ալ օգտակար է ։
Թագաւորին ֊Հաճ արտէն Ծառայութիւն կ'ընէ֊
լայ ։

10 Աչծաքի սիրողը արծաթէն չկշտանար ,
Ո՛չ ալ Հարստութիւն սիրողը՝ եւքէն բերքէն ։
Ասիկա ալ ունայնութիւն է ։
11 Երբոր բարիքը կը շատնայ ,
Ուտողնեն ալ կը շատնան ։
Ուրեմն գանիկա ունեցողներուն՝
Աչքով տեսնելէն ֊ի զատ ի՞նչ օգուտ կ'ըլլայ ։
12 Հացցր է աշխատող մարդուն քունը՝
Թէ չատ և թէ քիչ ուտէ ։
Բայց Հարուստին ֊Կուշտ ըլլալը՝
Զինքը որ անկիս Հանգիստ քնանայ ։
13 Արեւուն տակը տեսայ ոի մէկ գէշ ցաւ մը կայ ,
Այսինքն ան Հարստութիւնը որ իր տիրոջը
Ձախորդութեանը Համար պահուած է ։
14 Եւ ան Հարստութիւնը մէկ ձախորդ ֊Դէ֊
պուռտով մը կը կորսուի ։
Ու ինքը տղայ կը ծնանի , և անոր ձեռքը բան
մը չկայ ։
15 ֊Ինչպէս որ իր մօրը որովայնէն ելաւ ,
Անդե֊ մերկ կը դառնայ ։
Ինչպէս որ եկաւ , ֊Անդե֊ կ'երթայ ,
Ու իր աշխատութենէն բան մը չառնէր որ իր
Հետը տանի ։
16 Ա՛ս ալ գէշ ցաւ մըն է ,
Որ ինչպէս եկաւ , ճիշդ այնպէս կ'երթայ ։
Եւ ֊ի՞նչ օգուտ կ'ըլլայ անոր՝
Որ Հովին Համար կ'աշխատի ։
17 Աչիկա իր բոլոր օրերը ֊խաւարի մէջ կ'ուտէ
Մեծ տրտմութեամբ , հիւանդութեամբ և
տրտունութեամբ ։

18 Ա՛Հա աս ապրելութիւնը տեսայ ,
Որ վայելուչ է ուտել ու խմել ,
Եւ Աստուծոյ մէկու մը տուած կենացը բո֊
լոր օրերուն մէջ՝
Արեւուն տակը իր քրտնած բոլոր աշխատանքին
բարիքը վայելել ,
Վասն զի անոր բաժինը ասիկա է ։
19 Եւ ֊որ մարդուն որ Աստուած Հարստութիւն
ու առատութիւն կու տայ ,
Ու անկէ ուտելու և բաժինը առնելու
Ու իր աշխատանքէն ուրախանալու իշխանու֊
թիւն կու տայ ,
Ասիկա Աստուծոյ պարգեւն է ։
20 ֊Բանզի անիկա իր կենացը օրերը շատ չյիշեր ·
Վասն զի Աստուած անոր սրտին ուրախու֊
թիւնովը ֊Հոգ պատասխան կու տայ ։

ԳԼ · Չ

1 Չգործածուած Հարստութիւն , ։ ատանց Հարստութեան զա֊
նաներ ունենալու , ։ և Հարստութենէն գրկուած մեռնելու մեծ
ունայնութիւնը ։ ։ փոփոխուած բազմանիներուն ունայնու֊
թիւնը ։

1 ֊Ս֊րեւուն տակը տեսայ որ չարիք մը կայ ,
Ու անիկա մարդոց մէջը շատ կ֊ըլլայ ։
2 Մարդ մը որուն Աստուած Հարստութիւն ու
առատութիւն և փառք կու տայ ,
֊Այնպէս որ իր Հոգիին ցանկացած բաներէն
պակսութիւն մը չունենար ·
֊Բայց Աստուած անոր իշխանութիւն չտար
անկէ ուտելու ·
Հապա գանիկա օտար մարդ կ'ուտէ ։
Ա՛ս ալ ունայնութիւն ու գէշ ցաւ մըն է ։
3 Թէ որ մարդ Հարիւր ֊Ծնանի ,
Ու շատ տարիներապրի ,
Եւ անոր տարիներուն օրերը շատ ըլլայ ,
Ու անոր Հոգին բարութենէն չյագնայ ,
Եւ ֊Թաղիկա թաղուած ալ չունենայ ,
Կ'ըսեմ որ ֊Վիժածը անկէ ազնիկ է ։
4 Վասն զի ասիկա ունայնութեամբ կու գայ , ու
խաւարով կ'երթայ ,
Եւ անունը խաւարի մէջ կը ծածկուի ։
5 Արեւն ալ չտեսաւ ու ֊ի֊նչ չգիտցաւ ·
Ասիկա միւսէն աւելի Հանգիստ է ։
6 Իակ անիկա Թէև երկու Հազար տարի ապրի ,
Ու ազիկութիւն չտեսնի ,
Մէկմէկ ամէնքը մէկ տեղ չե՞ն երթար ։

7 ֊Մարդուն բոլոր աշխատութիւնը իր բե֊
րնին Համար է ,
Սակայն ֊Հոգին չկշտանար ։
8 Քանզի իմաստունը անմիաէն աւելի ի՞նչ բան
ունի ·
Կենդանիներուն մէջը քալել գիտցող ազգա֊
տր ի՞նչ ֊օգուտ կ'ունենայ ։
9 Աչքերով տեսնելը Հոգիով ֊փափաքելէն ա֊
զնիկ է ·
Ասիկա ալ ունայնութիւն ու Հոգիի տան֊
ջանք է ։

10 Ինչ որ եղաւ , արդէն անոր անունն դրուած է ,
Եւ յայտնի է թէ մարդն է ։

Ու անիկա իրմէ Զօրաւորին հետ վիճելու կարող չէ ։
11 Որովհետեւ ունայնութիւնն չասցընող չատ բաներ կան ,
Որոնցմէ ի՞նչ կը յոյսը ։
12 Քանզի ո՞վ գիտէ թէ որ բանը ազէկ է կեանքին մէջ մարդուն՝
Ունայնութեան պէս անցուցած իր ունայն կենացը բոլոր օրերուն մէջ ։
Վասն զի մարդուն ո՞վ պիտի յայտնէ ,
Թէ իրմէ ետքը արեւուն տակը ի՞նչ պիտի ըլլայ ։

ԳԼ · Է

1 Անանք են որ ունայնութեան գէմ կը գոռան · բարի համբաւ , 2 սուգ , 7 հանդերձութիւն , 11 խնամատարութիւն · 23 խնամատարութեան առանձնաչուք գործարարներէն ։

1 ՚Քաջ անուն՝ հոտաւէտ եղէն ,
Ու մահուան օրը ծնունդեան օրէն աղէկ է ։
2 Սուգի տան երթալը
Կոյսութիւն տուն երթալէն աղէկ է ·
Վասն զի ամէն մարդուն վախճանը ան է ,
Ու կենդանի եղողը ըսի՛ր իր սրտին մէջ կը դնէ ։
3 °Տրտմութիւնը ծիծաղելէն աղէկ է ,
†Վասն զի երեսին տրտմութեամբը սիրտը †կը զուարճանայ ։
4 Խնամատարութեան սիրտ՝ սուգի տունը ,
Իսկ յիմարներուն սիրտը ուրախութեան տունը կ'ըլլայ ։
5 ՚Խնամատարին յանդիմանութիւնը լսելը
Յիմարներուն երգը լսելէն աղէկ է ։
6 °Վասն զի ինչպէս է փուչերուն ձայնը կաթսային տակը ,
Յիմարներուն ծիծաղն ալ այնպէս է ·
Ասիկա ալ ունայնութիւն է ։
7 Երբ որ բռնութիւնը խնամատարը յիմար կ'ընէ ,
՚Ու պարգեւը հոգին սիրտը կ'ապականէ ։
8 Մէկ բանին վախճանը սկիզբէն աղէկ է ·
Ու երկայնամիտ ոգին հպարտ ոգիէն աղէկ է ։
9 ՚Մի արտարար հոգիդդ բարկանալու ·
Քանզի բարկութիւնը յիմարներուն ծոցին մէջ կը հանգչի ։
10 Մի ըսար թէ ինչո՞ւ համար առջի օրերը աս օրերէն աղէկ էին ,
Վասն զի աս բանիս համար բրած հարցմունքդ իմաստութեամբ չէ ։
11 Իմաստութիւնը ժառանգութեան պէս աղէկ է ։
Ու հարիւր տեւտողներուն օգտակար է ։
12 Վասն զի իմաստութիւնը հովանաւորութեան կ'ընէ ,
Ես արծաթը հովանաւորութեան կ'ընէ ·
Բայց գիտութեան օգուտը — է
Ու իմաստութիւնը զինքը տուողները կ'ապրեցնէ ։
13 Աստուծոյ գործքին նայէ ,
Վասն զի ՚անոր ծռածը ո՞վ կրնայ շիտկել ։
14 ՚Աղէկ օրը աղէկութեամբ անցուր ,
Ու դէշ օրը դժուարութեան բրէ ·
Ես Աստուած իրարու դիմացը գրաւ տուաք ,
Որ մարդ իրմէ ետքը բան մը չգտնէ ։
15 Իմ ունայնութեան օրերուս մէջ ամէնը տեսայ ·
՚Արդար կայ որ իր արդարութեանը մէջ կը կորսուի ,
Ես ամբարիշտ կայ որ իր ամբարշտութեանը մէջ երկարօրէն կ'երկրնցընէ ։
16 Խիստ չատ արդար մի ըլլար ,
՚Ու ինքզինքդդ չափէ գուրս իմաստուն մի կարծեր ·
Ինչո՞ւ համար քեզ կորսընցընես ։
17 Խիստ ամբարիշտ մի ըլլար ու յիմար մի ըլլար ·
Ինչո՞ւ համար ատենդ չեկած մեռնիս ։
18 Աղէկ է որ մէկը բռնես , ու միւսէն ալ ձեռքդ չքաշես ·
Վասն զի Աստուծմէ վախցողը ամենէն —ո՛ւ-ն՛ կ'ելլէ ։
19 ՚Իմաստութիւնը աւելի զօր կու տայ իմաստունին ,
Քան թէ քաղաքի մը մէջ եղող տասը իշխանը՝ ա՛ ո՛ւ-ը ։
20 ՚Իրաւ որ երկրի վրայ արդար մարդ չկայ
Որ աղէկութիւն ընէ , ու մեղք չգործէ ։
21 Մարդ քու սիրտդ ամէն խօսուած խօսքերուն մի տար ,
Որ քու ծառայիդ քեզի անէծք տալը չլսես ·
22 Վասն զի քու սիրտդ գիտէ
Որ դուն ալ չատ անգամ ուրիշներուն անէծք տուած ես ։
23 Ասոնց ամէնը իմաստութեամբ փորձեցի ·
՚Ըսի թէ կ'ես իմաստուն ըլլամ՝
Բայց անիկա ինծմէ հեռու էր ։
24 °Հեռուն ինչ ըլլալը ,
Ու °խիստ խորունկ եղածը ո՞վ կը գտնէ ։
25 ՚Ես իմ սրտովս պտտեցայ՝ որ գիտնամ և քննեմ ·
Ու փնտռեմ իմաստութիւնը ու հանճարը ·

ե Ցոր · ի · 32 · Ես · խո · 9 · Երէմ · խի · 19 ։
զ Պաղ · ԺԲ · 11 · ԺՀ · 33 · Ժող · է · Ցոհ · գ · 14 · 15 ։
է Պաղ · ՀԲ · 6 · Գաղ · Ը · 7 ։
ը Առաք · իբ · 1 · կա · Սրտաճանաչ նը ։
թ Ը Կոր · ե · 10 ։
ժ Կա · բարի կ'ըլլայ · ։
ի Ես Պաղ · Ղեսա · 5 · Առաք · ժգ · 31 · 38 ։
ի Պաղ · ՀԺ · 12 · ը · 2 ։
լ Եր · իգ · 8 · բ Օր · ժգ · 19 ։
խ Առաք · ժգ · 23 · ա · ժ · 27 ։
ծ Առաք · ժգ · 27 · ժգ · 38 · Ցոհ · ա · 19 ։
կ Գաղ · ժա · 7 ։
հ Ես Ցոր · ժբ · 14 · Գաղ · ա · 15 · Եսա · ժգ · 19 ։
ձ Գաղ · գ · 4 · բ Օր · իբ · 47 ։
ղ Գաղ · գ · 13 ։
ճ Առաք · իե · 16 ։
մ Հռոմ · ժբ · 3 ։
յ Ցոր · ժե · 38 · Պաղ · ՀԵ · 3 · Առաք · ժ · 27 ։
ն Առաք · խ · 32 · իգ · 5 · Գաղ · Թ · 10 · 13 ։
շ Ո՛չ Թագ · ը · 46 · բ Մ՚ն · գ · 36 · Առաք · ի · 9 · Հռոմ · գ · 23 · ա Ցոհ · ա · 8 ։
ո Հռոմ · ա · 32 ։
չ Ցոր · իբ · 18 · 20 · ա Տիմ · ը · 16 ։
պ Հռոմ · ժա · 33 ։
ջ Գաղ · ա · 17 · բ · 18 ։

Եւ յիմարութեան չարութիւնը
Ու անմտութիւնը Ե խենթութիւնը դիտեմ։
26 Ու ես մահուանէ դառն գտայ ան կնիկը՝
Որուն պարսն ու ծղնեղ և ուռկաններ
Ո՞ ձեռքերուն ու կապանքներ կան ։
Աստուծոյ առջևը հաճելի եղողը անկէ կ՚ազատի ,
Բայց մեղաւորը անկէ կը բռնուի ։
27 Ահա ասիկա գտայ , կ՚ըսէ Ժողովողը ,
Մէկիկ մէկիկ հաշիւը գտնելու համար։
28 (Որ հոգիս ասկաւին կը փնտռէ ,
Բայց չեմ կրնար գտնել ։)
Հարիւր մարդ՝ հազարէն մէկ գտայ ,
Բայց բոլոր ատոնց մէջը մէկ կնիկ մը չգտայ ։
29 Ահա միայն ասիկա գտայ՝
Որ Աստուած մարդը ուղիղ ստեղծեց ,
Բայց հնարնք չատ հնարքներ փնտռեցին ։

ԳԼ · Ը

1 Թագաւորները մեծապէս պատուելու է ։ 6 Գիտք և գիտել Աստուծոյ նախախնամութիւնը ։ 18 Աւելի աչկէ և բարեպաշտ մարդոց հետ չբաստրանալուն մէջ ըլլալ։ քան թէ չարերուն հետ յաջողակ ենալն մէջ ։ 16 Աստուծոյ գործը անքննելի է ։

1 Իմաստութին պէս ո՞վ կայ ։
Ու խօսքի մեկնութիւնը ո՞վ գիտէ ։
Մարդուն իմաստութիւնը անոր երեսը կը փայլեցընէ ,
Ու էրեսին պնդութիւնը կը փոխուի ։
2 Ես կ՚ըսեմ ։ Թագաւորին հրամանը պահէ ։
Մանաւանդ Աստուծոյ երդումին պատճառովը ։
3 Վնաս առնելէն երթալու մի արագար ։
Չար գործի մէջ մի կենար ,
վասն զի ան ինչ որ ուզէ՝ կ՚ընէ ։
4 Որ որ Թագաւորին խօսքը կայ , հոն իշխանութիւն կայ ,
Ու ո՞վ կրնայ անոր բսել Թէ ի՞նչ կ՚ընես ։
5 Պատուիրանքը պահողը չարիքի չհանդիպիր ։
Եւ իմաստունին սիրտը ժամանակը ու յարմարութիւնը կը ճանչնայ ։
6 վասն զի հաճելի գործառութիւնը իր ժամանակն ու յարմարութիւնը ունի ,
Քանզի մարդուն վրայ չատ նեղութիւն կու գայ ։
7 Վասն զի անիկա բլլալու բանը չգիտեր ։
Եւ ո՞վ պիտի յայտնէ անոր Թէ ինչպէս պիտի բլլայ ։
8 Հոգին վրայ իշխող մարդ չկայ , որ հոգին արգիլի ,
Ու մահուան օրուանը վրայ տիրող չկայ ։
Եւ ան պատերազմին մէջ ապահով չկայ ։
Ու ամբարչութիւնը իրեն հետևողները չազատեր ։
9 Ատոնց ամէնը տեսայ ,
Ու արևուն տակը եղող ամէն գործքին իմ սիրտս տուի ։
Առեն կայ որ մէկ մարդ մը ուրիշ մարդու վրայ կ՚իշխէ
Իրեն թշուառութիւններ հասնիր ։
10 Եւ ասոր հետ տեսայ ամբարիշտները
Որ թաղուեցան այն քաղաքին մէջէը ուր որ սանկ ըրին ։
Ա՛ալ ունայնութիւն է ։
11 Որովհետև գէշ գործքին վրայ վճիռը չուտով կ՚ազատուիր ,
Ա՛ս պատճառաւ մարդոց որդիներուն սիրտը
Չարութիւն ընելու ի՛նչ֊ո՛ւէ լեցուած է ։
12 Թէ և մեղաւորը հարիւր անգամ չարութիւն ընէ ,
Ու անոր կեանքն երկննայ ալ ,
Ա՛յնու ամենայնիւ ստոյգ գիտեմ որ Աստուածմէ վախցողներուն , անոր երեսէն վախցողներուն պիտի բլլայ ։
13 Բայց ամբարշտին բարութիւն պիտի չբլլայ ։
Ու անոնց կ՚օրերը պիտի չերկրնցընէ , հապա ստուերի պէս պիտի բլլայ ։
վասն զի Աստուծոյ երեսէն չվախնար ։
14 Ունայնութիւն մը կայ , որ աշխարհս վրայ կ՚ըլլայ ։
Այսինքն արդարներ կան , որոնց համբարիշտներուն գործքին պէս կը պատահի ։
Ու ամբարիշտներ ալ կան , որոնց արդարներուն գործքին պէս կը պատահի ։
Ըսի որ ա՛ս ալ ունայնութիւն է ։
15 Ու ես ուրախութիւնը գովեցի ,
վասն զի մարդ որ արևուն տակը
Ուտելէն , խմելէն և ուրախութին ընելէն
Ի զատ
Ուրկէ բան մը չունի ։
վասն զի արևուն տակը Աստուծոյ անոր տուած կենացը օրերուն մէջ՝
Իր աշխատանքէն ասիկա կը մնայ անոր ։
16 Երբոր ես իմ սիրտս տուի իմաստութիւնը գիտնալու ,
Ու երկրի վրայ եղած գրաստներն տեսնելու ,
(վասն զի թէ ցորեկ և թէ գիշեր
Իր աչքը քունն չտեսնեալ հոգը կայ ։)

ա Առաք · ե · 3 · 4 ։
բ Ա՛ր · ժ · 14 ։
գ Գէ · ա · 3 · 8 ։
դ Ցոր · լգ · 23 · Սապ · ժբ · 1 ։
ե Ծն · ա · 27 ։
զ Ծն · գ · 6 · 7 ։
է Առաք · գ · 8 · 9 ։
ը Ա՛ր · ժ · 24 · Տես Գործ · ա · 9 ։
թ Գէ · ժ · 4 ։
ժ Ցոր · լգ · 18 ։
ժա Գէ · գ · 1 ։
ժբ Առաք · իդ · 22 ։
ժգ Գէ · գ · 12 · Բ · 18 ։
ժդ Ա՛ր · ժ · 11 ։
ժե Ցոր · ժգ · 5 · Սապ · իբ · 6 · 7 ։
ժզ Առաք · ե · 5 ։
ժէ Սապ · լէ · 11 · 18 · 19 · Առաք · ա · 38 · 55 · Ես · գ · 10 · 11 · Մատ · իե · 34 · 41 ։
ժը Սապ · հգ · 14 · Գէ · բ · 14 · ե · 15 · Բ · 3 · 8 · 5 ։
ի Գէ · բ · 24 · գ · 12 · 22 · ե · 18 · Բ · 7 ։

17 Անատնեը Աստուծոյ բոլոր գործքերէն հասկըցայ ,
Որ մարդ չկրնար գտնել ան գործը՝ որ ը-
րևուն տակը կ՚ըլլայ .
վասն զի մարդը կ՚աշխատի փնտռելու , բայց
չգտնէր ,
Ու թէև իմաստունն ալ դիտնար բայ՝ հաս-
նելու կարող չըլլար :

ԳԼ . Թ

1 Մի և նոյն բաները կը պատահին բարիներուն ու չարերուն ,
4 Մարդս անպատճառ պիտի մեռնի . 7 անոր բաժինը ա՛ն կեան-
քս մէջ հաճոյքա ապրիլն է . 11 Աստուծոյ նախախնամու-
թիւնը ամէն բան կը կատարէ . 13 իմաստութիւնը ուժէն
աւելի է .

1 Վասն զի ա՛ս ամէնը իմ սրտիս մէջ դրի ,
Որ ա՛ս ամէնը քննեմ՝
Որ արդարները և իմաստունները ու անոնց
գործքերը
Աստուծոյ ձեռքին մէջ են .
Մարդ չգիտեր թէ սէրը և թէ ատելութիւնը .
Ամէն բան անոնց առջևնն է :
2 Ամէն բան ամէնուն հաւասարապէս կը պա-
տահի .
Արդարին ու ամբարշտին ,
Բարի հոգւոյն , մաքուրին ու անմաքուրին ,
Զոհ բնդունի ու զոհ չընդունին
Գոյնէն դիպուածը մէկ է .
Ինչպէս է բարի հոգւոյը , մեղաւորն ալ այնպէս է .
Երդում ընողը երդումէն վախցողին պէս է :
3 Արևուն տակը եղած բոլոր գործքերուն մէջ
գէշ բանը սա է ,
Որ ամէնուն գոյնէն դիպուածը մէկ է .
Ու նաև մարդոց սրտերնուն սիրտը
Չարութեամբ լեցուած ըլլայով՝
Իրենց կենդանութեան աւուրը իրենց սրտին
մէջ խելագարութիւն կայ ,
Ու ետքը մեռելներուն կ՚երթան :
4 Բանզի բոլոր կենդանիներուն ընկերացած
մարդէն յոյս կայ .
վասն զի ողջ շունը մեռած առիւծէն ազիւ է :
5 Որովհետև կենդանիները գիտեն որ պիտի
մեռնին .
Բայց մեռելները բան մը չեն գիտեր ,
Ու ալ ովարձ մը չեն առներ .
վասն զի յիշատակը մոռցուեցաւ :
6 Թէ անոնց սէրը , թէ ատելութիւնը
Եւ թէ նախանձը արդէն կորսուեցաւ .
Ու անոնք արևուն տակը եղող բաներուն մէջ
Ալ յաւիտան բաժին մը չունին :

7 Գնա ւհացդ ուրախութեամբ կեր ,
Ու գինիդ սրտով խմէ ,
վասն զի արդէն Աստուած քու գործքերուդ
հաւնեցաւ :
8 Հանդերձներդ ամէն առն ձեռնակ ըլլան ,
Ու գլխուդ վրայէն եղը պակաս չըլլայ :
9 Քու սիրած կինովդ հետ կեանք վայել
քու ունայնութեան կենացդ բոլոր օրերուն
մէջ ,
Որ Աստուած քեզի տուաւ արևուն տակը
քու ունայնութեանդ բոլոր օրերուն մէջ .
Վասն զի ա՛ս կեանքիս մէջ քու բաժինդ ա-
նիկա է
Արևուն տակը քեզի աշխատանքիդ :
10 Ձեռքդ ինչ որ գտնէ ընելու ,
Բա՛զդ ուժովդ ըրէ .
Քանզի ան քու երթալու գերեզմանիդ մէջ
Գործ , խորհուրդ , գիտութիւն ու իմաս-
տութիւն չկայ :

11 Դարձայ ևս արևուն տակը տեսայ ,
Որ ճամբան վազողներուն չէ ,
Ու պատերազմը զօրաւորներուն չէ .
Ու նաև հացը իմաստուններուն չէ ,
Եւ հարստութիւնն ալ հանճարեղներուն չէ ,
Ու նաև շնորհքը գիտուններուն չէ .
Հապա ժամանակ ու դիպուած կը պատահի
ամէնուն :
12 վասն զի մարդ իր ատենը անդամ չգիտեր .
Ինչպէս որ ձուկերը չար ուռկանով կը բռը-
նուին ,
Եւ թռչունները ծուղակի մէջ կը բռնուին ,
Նոյնպէս մարդոց որդիներն ալ ւորդայիի
մէջ կ՚իյնան ,
Երբոր չար ժամանակը յանկարծ անոնց վրայ
կու գայ :

13 Արևուն տակը սա իմաստութիւնն ալ տեսայ ,
Ու անիկա մեծ մեծ երեցաւ .
14 ՚Մէկ պզտիկ քաղաք մը՝ ու մէջն ալ քիչ
մարդ կար ,
Եւ անոր վրայ մէկ մեծ թագաւոր մը եկաւ
ու զանիկա պաշարեց ,
Եւ անոր դէմ մեծ պատնէշներ չինեց .
15 Ու անոր մէջը մէկ ազքատ իմաստուն մը գըտ-
նուեցաւ ,
Եւ անիկա իր իմաստութեամբը քաղաքը ա-
զատեց .
Բայց ան ազքատ մարդը բնաւ յիշող մը չեղաւ :
16 ՚Ասանկ բան մը թէ
Իմաստութիւնը ուժէն աւելի է ,
Թէև տգրսասին իմաստութիւնը կ՚անարգեն ,
Ու անոր խօսքերը մտիկ չեն ըներ :

17 Իմաստուններուն մեղմ խօսքերը՝

ֆ Ճոբ . ե . 9 . Գլ . գ . 11 . Համմ . յա . 33 .
ֆ Սաղ . կգ . 16 .
= Գլ . բ . 14 .
ֆ Ճոբ . իա . 7 . Ես . Սաղ . կգ . 3 . 18 .
13 . Մաղ . գ . 15 .
ֆ Ճոբ . յգ . 21 .
• Կամ՝ չար
ֆ Ճոբ . է . 8 . 9 . 10 . Եսթ . իգ . 14 .
Ես . իգ . 14 .
ֆ Գլ . բ . 15 .
ֆ Գլ . բ . 10 . 24 . գ .
13 . 22 . է . 18 .
ֆ Առակ . բ . 14 . 15 . Երեմ . ի . 23 .
ֆ Գլ . բ . 7 .
ֆ Առակ . իթ . 8 .
Դատ . յբ . 20 . 39 . յե . 26 . Ես . ոթ . 6 . 3 .
ֆ Տես բ Թագ . ի . 16 — 22 .
ֆ Առակ . իա . 22 . իգ . 5 . Գլ . է . 10 . Հմր . 18 .
ֆ Մաղ . գ . 2 . 3 .

Ծիմարներուն մէջ իշխան եղողին ազատակէն
աղէկ կը լսուին ։
18 Իմաստութիւնը պատերազմական զէնքերէն
աղէկ է ։
Բայց Մէկ մեղաւորը շատ բարութիւններու
կորստեանը պատճառ կ'ըլլայ ։

ԳԼ · Ժ

1 Իմաստութեան և յիմարութեան վրայով ։ 10 զեղջութեան։
16 Ծուլութեան 19 ու սասկի վրայով ։ 20 և Թագաւորութեան
վերնալը պատգամի վրայով խօսքեր ։

1 Մեռած ճանճերը խնդագործին եղը դարշա-
հոտ կ'ընեն ։
Քիչ մը անմտութիւնն ալ ©իմաստութեամբ և
պատուոյ երևելի եղողէն շատ-
կ'ընէ ։"
2 Իմաստնին սիրտը իր աջ կողմն է ,
Ու անմտին սիրտը իր ձախ կողմն է ։
3 Եւ անմիտ մարդը ճամբան քալելուատենն ալ
Խելքը պակաս ըլլալուն համար՝ իր յիմար
ըլլալը ամենուն կը յայտնէ ։
4 Թէ որ իշխանին բարկութիւնը քեզի դէմ ելլէ,
Իրու տեղդ մի ձգիր ։
Վասն զի Քաղցրութիւնը մեծ յանցանքները
կը գադրեցնէ ։
5 Աշուոն տակը մէկ չարութիւն մըն է տես-
ապ ,
Որ իշխանին երեսէն ելած անմտհետմութիւն
մը ըլլալ կ'երևնայ ։
6 Անմտութիւնը խոտ բարձր տեղերու վրայ
կը դրուի ,
Ու Հարուստները ցած տեղ մը կը նստին ։
7 Ձեսպ ծառաներ Նժ ձիերու վրայ հեծնէ էր ,
Եւ իշխաններ՝ որ երկրի վրայ ծառաներու
պէս կը քալեին ։
8 Փոս փորողը ինքը մէջը կ'ինկնայ ,
Ու ցանկ քակողը օձը կը խածնէ ։
9 Քարեր կտրողը անոնցմէ կը ցաւատի ,
Ե- փայտ ճեղքողը անկէ վտանգի մէջ կ'ըլլայ ։
10 Թէ որ երկաթը բթացած է , ու Նոր բերանը
չորէ ,
Աշատանը Ուժը էՆ պիտի †կրկնապատկելու է ։
Բայց իմաստութիւնը յաջողելու օգուտը ԱՆԻ ։
11 ‡Թէ որ օձը †Ժովելէն առաջ խածնէ ,
Աշատանը Թովիչին օգուտ մը չկայ ։"
12 Իմաստունին բերնին խօսքերը չնորհք է ,
Բայց Անմտինն չրթունքները զինքը կը կլլեն ։
13 Անոր բերնին խօսքերուն սկզբնատութիւնը
անմտութիւն է ,
Ու անոր խօսքին վերջը գէշ խենթութիւն է ։
14 Եւ յիմարը Նէ խօսքերը կը չատցնէ ։
Մարդս ինչ ըլլալիքը չգիտեր ,
Ու Անոր ՈՎ պիտի յայտնէ
Թէ անկէ ետքը ինչ պիտի ըլլայ ։
15 Ցիմարներուն աչխատանքը զիրենք կը ձանձ-
րացնէ
Քաղաքը երթալը չգիտցողին պէս ։
16 Վա՛յ քեզի , երկիր , երբոր քու Թագաւորդ
տղայ է ,
Ու իշխաններդ առտուանց Նբախոյ կ'ուտեն ։
17 Երանի քեզի , երկիր , երբոր քու Թագաւորդ
ազնուազարմ է ,
Եւ Քու իշխաններդ առտեսվ կ'ուտեն՝
Ուժի համար և ոչ Թէ գինովութեան համար ։
18 Շատ ծուլութիւնով չինքը կը փչէ ,
Եւ ձեռաց ծուլութիւնով տունը կը կաթի ։
19 Կոչուելը ծիծաղելու համար կ'ընեն ,
Ու Գինին կեանքը կ'ուրախացնէ ,
Իսկ արծաթը ամէն բանի կ'ըլլայ ։
20 Մտքիդ մէջ անգամ Թագաւորին անէծք
մի տար ,
Եւ քու պառկելու ննջասենեակիդ մէջ մեծա-
րան անէծք մի տար ։
Վասն զի երկինքի Թռչունը ան ձայնը կը տանի ,
Ու Թևաւորը խօսքը կը պատմէ ։

ԳԼ · ԺԱ

1 Ողորմած ըլլալու պատուիրանը ։ 7 կենաց մէջ մահը ։ 9 ու
մանկութեան տանը գատաստանի օրը միտք բերելու է ։

1 Քու հացդ ©նուրբութեամբ երեսին վրայ ձգէ ,
Եւ վասն զի շատ օրերէն ետքը գտնիկա պիտի
գտնես ։
2 Եօթնին և ութին ալ Բաժին տուր ,
Վասն զի չես գիտեր Թէ երկրի վրայ ինչ
պատուհաս պիտի ըլլայ ։
3 Թէ որ ամպերը լեցուն ըլլան ,
Երկրի վրայ անձրև կը թափեն ։
Ու երբոր ծառ մը դէպ ի հարաւ կամ դէպ ի
հիւսիս իյնայ ,
Ան ծառը ինկած տեղը կը մնայ ։
4 Հովը դիտողը չկրնար ցանել ,
Եւ ամպերուն նայողը չկրնար հնձել ։
5 Ինչպէս որ Ոգուն ||Հովին ճամբան որն ըլլալը ,
Ո- Յղիին որովայնին մէջ ոսկորներուն
կաշխատիլը չես գիտեր ,
Ալնպէս ալ ամենատեղծ Աստուծոյն գործը
չես գիտեր ։

Ի Հմ · 16 ։	ե ԳԼ · ը · 3 ։	է Կա՛ Օձ մը որ ա-	10 ։ Երբ · գ · 10 ·
ե Ճես · է · 1 · 11 · 18 ։	փ տ Թագ · իմ · 24 ·	ռանց ձայն հանե-	փ Մէկ · է · 5 ·
—	Ես · ԵՒսահ · իմ · 15 ·	լու կը խածնէ՝ մար-	ք Ասդ · Ձիր · 9 ·
∘ Կա՛ իմաստութիւ-	ք ԵՒսահ · իմ · 15 ·	դուն մտքերուն	Դևսհ · գ · 30 · ա
նէն ու պատուէն	ֆ Ես՝ · գ · 1 ·	մէջ չեն կրնար	Տիմ · գ · 18 · 19 ·
աւելի երեսի կ'նե-	ֆ ԵՒսահ · իմ · 10 ·	ներթափանցել	ֆ Եփես · է · 16 ·
լէ ·	է · 22 ·	Ես չեն Ձանր ·	ֆ Ճահ · է · 8 ·
= ԵՒսահ · ժգ · 16 ·	ֆ Սաղ · է · 15 · Ես ·	ֆ Սաղ · ՃԸ · 4 · 5 · Ես ·	ֆ Կա՛ Հոգիին
ժը · 2 ·	ա · իմ · ԻԷ · 27 ·	ըմեմ · ը · 17 ·	Ք · 5 · Գաղ · գ · 9 ·	ֆ Սաղ · ՀՔ · 14 · 15 ·
	ֆ Եչ · գործակիցս	ֆ ԵՒսահ · ժ · 32 · ժը ·		

13 ·	ֆ Սաղ · ՃԳ · 13 ·	10 ։ Երբ · գ · 10 ·
ֆ ԵՒսահ · ժ · 14 ·	ֆ Եչ · իբ · 28 · Գաղ ·	ֆ Մէկ · է · 5 ·
ֆ ԵՒսահ · ժէ · 2 ·	իԳ · 5 ·	ֆ Ասդ · Ձիր · 9 ·
ֆ Գլ · գ · 22 · գ · 12 ·	—	Ղևսհ · գ · 30 · ա
ֆ Ես · գ · 4 · 5 · 12 ·	= Տես Ես · ը · 20 ·	Տիմ · գ · 18 · 19 ·
ը · 7 ·	ֆ Ես Օբ · ժ · 10 · ԵՒս ·	ֆ Եփես · է · 16 ·
ֆ Ես · գ · 4 · 5 · 12 ·	ահ · ԻԲ · 17 ·	ֆ Ճահ · գ · 8 ·
է · 11 ·	Մատ · ժ · 43 · թկոր ·	ֆ Կա՛ Հոգիին
ֆ ԵՒսահ · լա · 4 ·	Ք · 5 · Գաղ · գ · 9 ·	ֆ Սաղ · ՀՔ · 14 · 15 ·

6 Ա՛ռաւ՛ած քու սիրդ ցանէ ,
եւ երիկունը քու ձեռ.գդ պարապ մի թողուր .
վասն զի չես գիտեր թէ որը օգտակար պիտի ըլլայ , առ թէ ան ,
կամ թէ երկուքը հաւասարապէս աղէկ պիտի ըլլան :
7 Իրաւ որ լոյսը քաղցր է ,
Ու հարեւր տեսնելը աչքերու մեծապէս է .
8 Բայց թէկ մարդ մը շատ տարի ապրի ,
Ո՛ անոնց ամենուն մէջ ուրախանայ ,
խաւարի օրերն ալ յիշելու է ,
վասն զի անոնք շատ պիտի ըլլան .
Բոլոր գալիքը ունայնութիւն է :

9 Ով երիտասարդ , քու մանկութեանդ մէջ
ուրախ եղիր ,
Ու երիտասարդութեանդ օրերուն մէջ սիրտդ
թող քեզ գուարճացընէ .
Եւ քու սրտիդ ճամբաներովը
Ու աչքերուդ նայուածքովը քալէ .
Բայց գիտցիր որ ասոնց ամենուն համար
Ա՛ստուած քեզ դատաստանի պիտի բերէ :
10 Եւ քու սրտէդ տրտմութիւնը վերցուր ,
Ու մարմնէդ չարութիւնը հեռացուր ,
Վասն զի մանկութիւնը ու երիտասարդութիւնը ունայնութիւն է :

ԳԼ . ԺԲ

1 Սակայն կանուխկէն յիշէ՛ զարարիչդ պատուէր : 8 Ծոցովը գին հոգը տարվելջորներու համար : 13 Աստուծոյ երկիւղը ու նորոգութեան գեմ ապրուստ գեղեցիկ մըն է :

1 Եւ քու Ստեղծիչդ երիտասարդութեանդ
օրերուն մէջ յիշէ
Դեռ թշուառութեան օրերը չհասած ,
Ու ան տարիները չհասած ,
Որոնց մէջ պիտի ըսես թէ Անոնց չեմ հաւնիր .
2 Արեւը , լոյսը , լուսինը ու աստղերը չխաւարած ,
Ու անձրեւին ետեւէն ամպերը չդարձած .
3 Ան օրը որ տանը պահապանները պիտի դողան ,
Ու զօրաւոր մարդիկը պիտի ծռին ,
Եւ աղացողները քիչ մնալնուն համար պիտի դադարին ,
Ու պատուհաններէն նայողները պիտի մթնանան .
4 Ու երթար աղօրիքին ձայնը տկարանայ ,
Փողոցներուն մէջ գոցուին .
Եւ թռչունի ձայնով պիտի ելլէն ,
Ու բոլոր երգեցող աղջիկները նիհարն պիտի ըլլան .
5 Եւ բարձրէն պիտի վախնան ,
Ու ճամբուն մէջ վախերու պիտի ըլլան .
Եւ նշենին պիտի ծաղկի ,
Ու մորեխը ծանրութիւն պիտի սեպուի ,
Եւ °ախորժակը պիտի դադարի .
վասն զի մարդ Իր յաւիտենական տունը կ'երթայ ,
Ու °կացողները փողոցներուն մէջ պիտի չշրջին .
6 Դեռ արծաթէ թելը չփրթած ,
Ու ոսկիէ բաժակը չկոտրած ,
Եւ սափորը աղբիւրին քովը չփշրած ,
Ու չրհարնին վրայի անիւը չկոտրած .
7 Ա՛ստուածը հոգը երկիրը պիտի գառնայ՝ ուրչ եղածին պէս .
Ու հոգին Աստուծոյ պիտի գառնայ՝ Որ զանիկա տուաւ :

8 Ունայնութիւն ունայնութեանց , ըսաւ Ժողովողը ,
Ամէն բան ունայնութիւն է :
9 Եւ որչափ որ Ժողովողը իմաստուն էր ,
Ա՛յնչափ ալ ժողովուրդին գիտութիւն սորվեցուց .
Եւ †խորհրդով ու քննելով
°Շատ առակներ չարադրեց :
10 Ժողովողը փնտռեց որ ախորժելի խօսքեր գտնէ ,
Ու գրուածը ուղիղ և ճշմարիտ խօսքեր են .
11 Իմաստուններուն խօսքերը խթաններու պէս են ,
Ու ժողովներու տէրերուն գամուած բևեռներու պէս՝ մէկ հովիւէ տրուած :
12 Վերջապէս , որդեակ իմ , անոնցմէ խրատ առ .
Շատ գիրք չընելը ծայր չունի ,
Ու †շատ կարդալը մարմինը կը յոգնեցընէ :
13 Ա՛ս բոլոր խօսքին վախնանը լսենք .
Ա՛ստուծմէ վախցիր ու անոր պատուիրանքները պահէ ,
վասն զի մարդուս բոլոր պարտաւորութիւնը ասկա է :
14 Քանզի Ա՛ստուած ամէն գործ քը՛
Ամէն ծածուկ բաներու հետ՝
Թէ բարին և թէ չարը դատաստանի պիտի բերէ :

ե Գէ . ե . 31 :
զ Թա . ժե . 39 :
է Գէ . ժբ . 14 : Հբ . ասմ . բ . 6—11 :
ը Բկր . ե . 1 : բՅհմ . բ . 22 :
թ Սաղ . լԹ . 5 :
ժ Ելս . ժ . 39 :
ի Ա՛ստ . իր . 6 : Ցեփ . Ցեփ . գ . 22 :
լ Ցեր . ժե . 13 :
խ Երեմ . ի՛ . 17 :
ծ Ծն՛ . գ . 19 : Ցեր . լԳ . 13 : Սաղ . գ . 3 :
կ Կամ կապարջը .
ր Ելք . ի՛ . 5 :
ս Գէ . գ . 21 :
տ Թա . ժբ . 22 : ի՛ե . 16 : Ցեր . լԳ . 14 : Ես . ծե . 16 : Զաք . ժբ . 1 :
ց Գէ . ա . 8 :
ւ Կամ կշռելով
փ գ Թագ . գ . 32 :
ք Գէ . ա . 28 :
օ Ա՛ր . գ . 2 . ժ . 12 :
ֆ Գէ . ա . 9 : Մատ .
ժբ . 36 : Գաղ . ժե . 30 . 31 : Հասմ . բ . 16 : ժգ . 10 . 12 : Կոր . գ . 5 : բ Կոր . ե . 10 :
—

ԵՐԳ ԵՐԳՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

1 Եկեղեցին Քրիստոսի վրայ իր ունեցած սէրը կը ցուցնէ. 3 կը խոստովանի իր ապերախտիքը. 7 ու կ՚ապաչի որ անոր հոգին առաջնորդէ. 8 Քրիստոս հովիւներուն վրայ ունեցը կը խրկի քարկոզ. 9 ու իր սէրը անոր ցուցնելով. 11 հաստատ կեան խոստումները կ՚ընծայէ անոր. 12 Եկեղեցին ու Քրիստոս իրարու կը յայտնեն իրենց խնդակցութիւնը.

1 Երգ երգոց Սողոմոնի.

2 Իր բերանին համբոյրներովը թող համբուրէ զիս.
Վասն զի քու սէրդ դինիէն աղէկ է.
3 Քու եղերուդ հոտը ախորժելի է,
քու անունդ թափուած եղի պէս է,
Անոր համար օրիորդները քեզ կը սիրեն.
4 Ձիս քաշէ, ետևդ հասնինք պիտի վազենք.
Թագաւորը իր ներքին սենեակները տարաւ զիս.
Քեզի հնար ցնծանք և ուրախանանք,
Քու սէրդ դինիէն աւելի յիշենք.
Քեզ ուղղութեամբ կը սիրեն.

5 Ով երուսաղէմի աղջիկներ,
Իս սև եմ բայց գեղեցիկ,
Կեդարու վրաններուն պէս,
Սողոմոնին վարագոյրներուն պէս.
6 Իմ սևցած ըլլալուս մի նայիք,
Վասն զի արեգ զիս տեսաւ.
Իմ մօրս որդիքը բնաւ սրգողացան,
Ձիս այգիներու պահապան ըրին.
Բայց իմ այգիս պահպանութիւն չըրի.

7 Գաղմ. Ինձի, ով հոգիս սիրածը,
Քու հօտդ ո՞ր կ՚արածես.
Կէս օրին ո՞ր կը պառկեցընես.
Քանզի քու ընկերներուդ հօտերուն քովը
Ինչո՞ւ էթամ ետևնին պէս ըլլամ.

8 Թէ որ դուն չես գիտեր, ով կիներուն գեղեցիկը,
Հօտերուն հետքերնէն գնա,
Ու հովիւներուն վրաններուն քովը քու ուլերդ արածէ.
9 Փարաւոնի կառքերուն ընտիր ձիերուս
Նմանցուցի քեզ, ով իմ սիրուհիս.
10 Հետ. այտերդ գարդերով գեղեցիկ է,
Եւ քու պարանոցդ՝ քառանիսանկիներով.
11 Քեզի ոսկեղէն գարդեր պիտի չինենք
Արծաթիկ կիտուածներով.

12 Երբոր թագաւորը սեղանն էր,
Իմ նարդոս իր հոտը բուրեց.
13 Իմ սիրականս ինձի ատաչխ ծրարին պէս է,
Գիչերը իմ տանդքներուս մէջը պիտի հանգչի.
14 Իմ սիրականս Հինգի ողկոյզին պէս է ինծի
Ենգադիի պտղենիներուն մէջ.

15 Ահա գեղեցիկ ես, ով իմ սիրուհիս,
Ահա գեղեցիկ ես. քու աչքերդ աղաւնիներ ըլլան.
16 Ով իմ սիրականս, ահա գեղեցիկ ես ու վայելուչ.
Եւ մեր անկողինը կանաչ է.
17 Մեր տուներուն գերանները նոճենիփայտ են,
Ու մեր առիթները մայր փայտէ են.

ԳԼ. Բ

1 Քրիստոսի ու իր եկեղեցիին փոխադարձ սէրը. 3 Եկեղեցին յայտը. 10 ու կոչումը. 14 Քրիստոսի խնդրը իր եկեղեցիին վրայ. 16 Եկեղեցիին խոստովանութիւնը. անոր հաստատ ու յոյսը.

1 Ես Սարոնի ծաղիկն եմ,
Ու հովիտներուն շուշանը.
2 Ինչպէս շուշանը փուշերուն մէջ
Ատանկ է իմ սիրուհիս աղջիկներուն մէջ.
3 Ինչպէս ընձառներուն անտառի ծառերուն մէջ
Ատանկ է իմ սիրականս երիտասարդաց մէջ.
Մեծ հոժանիին տակը սիրտիս ախորժելով նստայ,
Ու անոր պտուղը իմ քմիցս քաղցր է.
4 Ինձ դինեհարկին տունը բերաւ,
Եւ անոր դրօշը իմ վրաս սէր էր.
5 Ինձ կարկանդակներով զօրացուցէք,
Ինձ խնձորներով ուժովցուցէք,
Վասն զի ես սիրով կը հնանամ.
6 Անոր ձախ ձեռքը իմ գլխուս տակը ըլլայ,
Ու աջ ձեռքը զիս գրկէ.
7 Ով երուսաղէմի աղջիկներ,
Ձեզ այծեամներով կամ դաշտի եղնիկներով կ՚երդնում,
Որ սիրուհին չվերցընէք ու չարթնցընէք,
Մինչև որ ինքը չուզէ.
8 Իմ սիրականիս ձայնն է.
Ահա անոնկ լեռներուն վրայէն ցատկելով՝
Ու բլուրներուն վրայէն ցատկռտելով կու գայ.
9 Իմ սիրականս այծեամին կամ եղնիկի ձագի կը նմանի.
Ահա հիմա մեր պատին ետևը կայներ է,

= 9 Քագ. 9 · 34.
ե Գէն. 9 · 10.
է Ելք. Յաս. 4 · Ցաղմ. 44 · 14 · Յր · 32.
ը Փիլ. 9 · 13 · 15 · 14 · Ա Կաղ. Ելք · 14 · 15 · Ցաղմ. Յգ · 2 · Ե. Փիլ. ր · 6.
ի Կամ ուղղները
Կամ Նաւագործի
ձ Գէն. ր · 8 · 10 · 13 · 9 · 1 · 2 · 8 · 4.
ղ Գէն. 9 · 13 · Ե · 18 · Ցաղմ. Յե · 14 · 15.
ճ Եզեկ. Յգ · 11 · 18 · 13 · Ցաղմ. Լր · 1 · 8 ·
ն Եբր · գիմիկ
շ Գէն. ը · 3.
ո Գէն. գ · 3 · ը · 4.
չ Հմր · 17 ·

Գաւառ հանդերձն կը նայի ,
վանդակներէն կ՚երևնայ ։
10 իմ սիրական պատասխան տալով՝ ինծի ը-
սաւ ,
Ելլիր , ով սիրուհիս , ով գեղեցիկս , ու
եկուր ։
11 Քանզի ահա ձմեռ անցաւ ,
Անձրևները անցան գացին ։
12 Գետնի վրայ ծաղիկներ կ՚երևնան ,
Ցօտելու ժամանակը հասաւ ,
Ու մեր երկրին վրայ տատրակին ձայնը կը
լսուի ։
13 Ան՝ թզենին իր թուզերը կը հասցընէ ,
Ու որթերը ծաղիկնան և հոտ կու
տան ։
Ելիր , ով սիրուհիս , ով գեղեցիկս , ու ե-
կուր ։
14 Ով իմ աղաւնիս , վէմին խոռոչներուն մէջը՝
Ապառաժին հովանիին տակը եղած ։
Ինծի երեսդ ցուցուր , ձայնդ ինծի լսել տուր ։
Քանզի ձայնդ քաղցր՝ ու դէմքդ գեղեցիկ է ։
15 Բռնեցէք մեզի հազէազները ,
Աղուեսները աւերող պզտիկ աղուէսները ։
Վասն զի մեր այգիները ծաղկեր են ։
16 Իմ սիրականս իմն է , ու ես անոն եմ ։
Ան իկա իր հոտը շուշաններու մէջ կ՚արածէ ։
17 Մինչև ցօրուան հովը չվչայ՝ ու տուներուն ե-
ւոացած՝
Դարձիր , ով իմ սիրականս ,
Ո- բեղերուն լեռներուն վրայի նայծեման դե-
կամ եղնիկներու ձագին պէս եղիր ։

ԳԼ · Գ

1 Եկեղեցին պատերազմը ու յաղթութիւնը փառաբանելէն ետքը՝ եկեղեցին ներհառնել կը պաղծէ ։

1 Իմ հոգւոյս սիրածը
Դիւերը անկողնիս մէջ փնտռեցի ։
Զանիկա փնտռեցի , բայց չգտայ ։
2 Ելլեմ հիմա պտտիմ քաղաքին մէջը ,
Փողոցներուն ու հրապարակներուն մէջ ։
Իմ հոգիս սիրածը փնտռեմ ։
Զանիկա փնտռեցի , բայց չգտայ ։
3 Քաղաքին մէջ պտըտող պահապանները զիս
գտան ։
Որոնց ըսի իմ հոգիս սիրածը տեսա՞ք ըսի ։
4 Անոնցմէ քիչ մը առաջ անցնելով՝
Իմ հոգիս սիրածը գտայ ։
Զանիկա բռնեցի ու չթողուցի ,
Մինչև որ իմ մօրս տունը՝
Ու զիս ծնանողին սենեակը տարի ։
5 Ով երուսաղէմի աղջիկներ ,
Զեզ այծեամներով կամ դաշտին եղնիկներով
կ՚երդնում ցոյցնեմ ,
Որ սիրուհին չվերցընէք ու չարթնցընէք՝
Մինչև որ ինքը չուզէ ։
6 Ո՞վ է ասիկա՝ որ գմուռսով և կնդրուկով
Ո- փերեզականերուն ամէն փոշիովը լցուն-
կուած՝
Անապատէն կ՚ելլէ ծուխի սիւներու պէս ։
7 Ահա Սողոմոնին ապահոցը ,
Որուն բոլորտիքը խրայէլի զօրաւորներէն
վաթսուն զօրաւոր կայ ։
8 Ամէնքն ալ սուսերաւոր են ,
Ո- պատերազմի վարժուած են ։
Գիշերուան վախին համար՝
Ամէն մէկուն սուրը իր ազդրին վրայ է ։
9 Սողոմոն թագաւորը Լիբանանի ծառերէն
Մէկ գահաւորակ մը շինեց իրեն համար ։
10 Սիւները արծաթի՝ յենարանները ոսկի՝
Բազմոցը ծիրանիէ շինեց ։
Ու մէջը երուսաղէմի աղջիկներէն
† խնամ գեղեցիկ՝ նախատպրծուած էր ։
11 Ով Սիօնի աղջիկներ , ելէք ,
Եւ Սողոմոն թագաւորը տեսէք
Ան թագովը , որով իր մայրը անոր փեսացու-
թեան օրը
Ու սրտին ուրախութեան օրը պսակեց զա-
նիկա ։

ԳԼ · Դ

1 Քրիստոս կը հրաւառակի եկեղեցին շնորհները ։ 8 անոր վը-
րայ իր ուշադրութիւնը կը յայտնէ ։ 16 եկեղեցին կը խնդրէ որ
անոր ներկայութեանը համար պատրաստութիւն տեսնէ ։

1 Ահա գուն գեղեցիկ ես , ով իմ սիրուհիս ,
Ահա գուն գեղեցիկ ես ։
Լայնիկ մէջէն քու աչքերդ ազաւնիներու
աչերուն կը նմանին ։
Քու մազերդ Գաղաադ էլեր պառկող հա-
ծերուն հօտին պէս են ։
2 Կտաւներդ լուացարանէն ելլող խուռած հօ-
տի պէս են ,
Որոնց ամէնը երկուորեակ կը ծնանին ,
Ու անոնց մէջը ամուլ չկայ ։
3 Քու շրմունքներդ կարմիր դերձանի պէս են ,
Ու խօսուածդ գեղեցիկ է ։
Ոսկեզօծ լայնիկ մէջէն
Նշուած կողերու կը նմանին ։
4 Քու պարանոցդ դիւնարանի համար շինուած
Դաւիթի աշտարակին պէս է ,
Որ հոն հազար ասպար կախուած են ,
Ամէնն ալ զօրաւորներուն վահաններն են ։
5 Քու երկու ծոիներդ նման է երկու ուլերու՝
Ու այծեամի մը երկուորեակ ձագ են ։

† եբէր · սիրով

= գլ · ա · ւս · ի · ւե ։

‡ կամ լեռներն երբ-
ջան

= գլ · գ · ւս · ի · ւե ։

† գլ · գ

եւ չուչաններու մէջ կ'արածումն։
6 ՚Օրուան հուր չիչաճ՝ ու տաւիղները չհեռացան՝
ես զմուռսի լեռը ու կնդրուկի բլուրը պիտի երթամ։
7 ՚Բոլորովին գեղեցիկ ես, ով իմ սիրուհիս,
եւ քու վրադ արատ չկայ։
8 Ով Հարան, ինծի հետ Լիբանանէն եկուր,
ինծի հետ Լիբանանէն եկուր։
Ամանային գագաթէն՝ Սանիրին ու ՚Հերմոնին գագաթէն,
առիւծներուն մխրճուելէն -- ինձերուն լեռներէն նայէ։
9 Սիրտս առիր, ով իմ հարս քոյրս,
Սիրտս առիր քու մէկ աչքովդ
եւ պարանոցիդ մէկ քարամանեակովը։
10 Քու սէրդ ի՜նչ գեղեցիկ է, ով հարս քոյրս.
՚Քու սէրդ գինիէն ալ է,
ու քու եղերադ անուշահոտութիւնը՝
Ամէն խունկերէն։
11 Շրթունքներդդ խորխոր մեղր կը կաթի, ով հարսն,
Վէզովիդ տակը մեղր ու կաթ կայ.
եւ քու զգեստներուդ անուշահոտութիւնը
Լիբանանի հոտին պէս է։
12 Իմ հարս քոյրս փակեալ պարտէզ մըն է,
փակեալ աղբիւր -- կնքուած աղբեակ մըն է։
13 Քու տունկերդ քաղցրահամ պտուղներով,
՚Հինաներով ու նարդոսներով՝ նռնենիներ դըրախտ է.
14 Նարդոս և քրքում, եղէգն և կինամոն,
Ամէն կնդրուկի ծառով, զմուռսով ու հալուէով
եւ բոլոր գլխաւոր խունկերով։
15 Պարտէզներու աղբիւր,
կենդանի ջուրի ղրնար
ու Լիբանանէն վազ հեղեղներ։
16 Արթնացիր, ով հիւսիս, եկուր, ով հարաւ,
իմ պարտէզիս վրայ փչէ, որ անոր խունկերը բուրեն.
Իմ սիրականս թող իր պարտէզը գայ,
ու իրեն ախորժելի եղած պտուղները ուտէ։

ԳԼ. Ե

1 ՚Քրիստոս իր կանչելովը եկեղեցին կ'արձանացնէ։ 2 Եկեղեցին Քրիստոսի սիրոյն համը առնելով՝ կը նմանայ։ 9 Քրիստոսի Հարցնելուն առարթութիւնը։

1 ՚Ին պարտէզս եկայ, ով հարս քոյրս,
իմ զմուռսս խունկերուս հետ ժողվեցի,
՚Իմ խորիսխս մեղրիս հետ կերայ,
իմ գինիս կաթովս խմեցի։

2 Ես կը քնանամ, բայց իմ սիրտս արթուն է։
Ահա իմ սիրականիս ձայնն է, [illegible] կը զարնէ -- [illegible]ե։
Ով իմ քոյրս, իմ սիրուհիս,
իմ ազաւնիս, իմ կատարեալս, բաց ինծի։
Քանզի իմ գլուխս ցօղով լեցուեցաւ,
Ո- մազերիս գիշերուան չաղերով։
3 Իմ պատմուճանս հաներ եմ,
Զանիկա ի՞նչպէս հագնիմ։
Ոտքերս լուացեր եմ,
Զանոնք ի՞նչպէս ապականեմ։
4 Իմ սիրականս իր ձեռքը ծակէն երկրնցուց,
Ու անոր համար իմ ալիքս դողացաւ։
5 Ես եղայ որ իմ սիրականիս բանամ,
Ու ձեռքերս զմուռսով ու իմ մատներս ընտիր զմուռսով կաթեցի
փականակին բռնելու տեղին վրայ։
6 Ես իմ սիրականիս բացի,
Բայց իմ սիրականս քաշուեր գացեր էր.
Երբոր անոնկա կը խօսէր՝ իմ հոգիս նուաղեցաւ։
՚Զանիկա փնտռեցի, բայց չգտայ.
Զանիկա կանչեցի, բայց ինծի պատասխան չտուաւ։
7 Պարսպին մէջ պտրտող պահապանները զիս գտան,
Զարկին վիրաւորեցին զիս.
Պատպին պահապանները քօղս վրայէս վերցուցին։
8 Ով Երուսաղէմի աղջիկներ, ձեզ կ'երդմնցնեմ,
Եթէ որ իմ սիրականս գտնէք,
Անոր պատմէք որ ես սիրովն կը նուաղիմ։
9 ՚Ով ինծի՞ն քան զեղեցիկը,
Քու սիրականդ -- ինչ սիրականէ ի՞նչ տարբերութիւն ունի.
Քու սիրականդ -- ինչ սիրականէ ի՞նչ տարբերութիւն ունի,
Որ մեզ այդպէս կ'երդմնցնես։
10 Իմ սիրականս սպիտակ ու կարմիր է,
Տասը հազարի մէջ երեւելի է։
11 Անոր գլուխը զուտ ոսկի է,
վարսերը ցրուած՝ -- ագռաւի պէս սեւ են.
12 Աչքերը վազող յորդուն քովը
կաթովի լուացուած աղաւնիներու -- չափուած կը նմանին,
Գամուած գոհարներու պէս են։
13 Անոր այտերը խնկալից տունկերու ածուին
եւ անուշահոտ ծաղիկներու թագաւորուն պէս են։

ե Գլ. բ · 17։
զ Եփես. է · 27։
է բ Օր · գ · 9։
ը Գլ. ա · 9։
թ Ածմ. ի · 13 · 14։
Գլ. է · 1։
ժ Ծն · իե · 27 · Ածմ · գ · 6 · 7։
ի Գլ. ա · 14։
լ Ածմ. գ · 10 · է · 38։
խ Գլ. է · 1։
— Գլ. ը · 16։
ծ Գլ. գ · 11։
կ Դ.թագ. ժե · 7 · 10։
Ածմ · գ · 29 · ժե · 1։
հ 14։
ձ Ածմ · գ · 29։
ղ Գլ. գ · 1։
ճ Գլ. գ · 3։
մ Գլ. ա · 8։
յ Գլ. ա · 15 · գ · 1։
—

Շրթունքները ընտիր զմուռս կաթող չուչան-
ներ են ։
14 Ձեռքերը ոսկի մատնիներ են՝
թարխան քարերով լեցուած ։
Որովայնը բանուած փղոսկր է՝
Շափիւրաներով ծածկուած ։
15 Սրունքները մարմարիոն սիւներ են՝
Ընտիր ոսկի խարիսխներու վրայ հաստատուած.
Կերպարանքը Լիբանանին պէս՝
Եզերիներուն պէս ընտիր է ։
16 Անոր բերքը քաղցր՝
Ու ինքը բոլորովին ցանկալի է ։
Ա՛հա այսպէս է իմ սիրականս , այսպէս է իմ
բարեկամս ,
Ով Երուսաղէմի աղջիկներ ։

ԳԼ · Զ

1 Եկեղեցին իր հաւատքը ջրհոսի վայ բլուր կը խոստովանի ։
4 Բերկամս կը ցուցնի եկեղեցիին շնորհքները , 10 ու իր սէ-
րը՝ որ ունի անոր վայ ։

1 Քու սիրականդ ո՞ւր գնաց ,
Ո՛վ կիներուն գեղեցիկը ։
Քու սիրականդ ո՞ւր գարձաւ ,
Որ զանիկա քեզի հետ փնտռենք ։

2 Իմ սիրականս իր պարտէզը՝
Խնկալից տունկերուն ածուները իջաւ ,
Որ պարտէզներու մէջ արածէ ,
Ու շուշաններ ժողվէ ։
3 Ես իմ սիրականիս եմ ,
Եւ իմ սիրականս իմն է ։
Անիկա շուշաններու մէջ կ՚արածէ ։

4 Թերսայի պէս գեղեցիկ ես , ով իմ սիրուհիս.
Երուսաղէմի պէս հաճելի ես ,
Ո՛ր գրօշակներ ջոկոր պէս ահարկու ես ։
5 Աչքերդ ինծմէ դարձուր ,
Վասն զի անոնք ինծի յաղթեցին ։
Մազերդ՝ Գաղաադը պատկաղ հայծերուն
Հօտին պէս են ։
6 Ակռաներդ լուացարանէն ելած մանր ներսերուն
Հօտին կը նմանին ,
Որոնց ամէնը երկուորեակ կը ծնանին ,
Ու անոնց մէջը ամուլ չկայ ։
7 Ականջդ լայակիդ մէջէն՝
Նռան կտորներու կը նմանին ։

8 Թագուհիները վաճառն ու հարճերը ութ-
սուն՝
Եւ օրիորդները անհիւ են ։
9 Իմ աղաւնիս՝ իմ կատարեալս մէկ է ,
Իր մօրը մէկ հատիկը ,
Ջինքը ծնանողին ընտրեալն է ։
Զանիկա աղջիկները տեսան ,
Ու անոր երանի ըսին ։

Թագուհիները ու հարճերն ալ ,
Եւ զանիկա գովեցին ։
10 Ո՞վ է ասիկա՝ որ արշալոյսի պէս կը նայի ,
Որ լուսնի պէս գեղեցիկ , արեւու պէս մա-
քուր ,
Ու՝ գրօշակիր ջոկոր պէս ահարկու է ։

11 Ընկոյզներու պարտէզը իջայ ,
Որ ձորին դ՚կանաչութիւնը տեսնեմ ,
Եւ՝ տեսնեմ թէ արդեօք որթը ծլեցա՛ւ ,
Ու նռնենիները ծաղկեցա՛ն ։
12 Ես չդիտցած՝ իմ հոգիս Ամինադաբին կառ-
քերուն պէս բերաւ զիս ։
13 Դարձիր , դարձիր , ով Սողոմացիդ ,
Դարձիր , դարձիր , որ քեզ տեսնենք ։
Ի՞նչ պիտի տեսնէք Սողոմացիին վրայ ։
Իբրեւ երկու բանակներու դուռդը ։

ԳԼ · Է

1 Եկեղեցիին շնորհքներուն վրայով ուրիշ սաղմոսերգութիւն մը ։
10 Եկեղեցին կը խոստովանի իր հաւատքը ու բաղձանքը ։

1 Ի՞նչ գեղեցիկ են քու քայլերդ կօշիկներով ,
Ո՛վ իշխանի աղջիկ ։
Քու բարձերուդ կազմուածքը
Երկելի արուեստաւորի մը ձեռքով չինուած
Մանեակներու կը նմանի ։
2 Քու պարագդ բսկեփիքով լեցուն բոլորակ թաս
մի կը նմանի ։
Քու փորդ չուչանով պատած ցորենի չեզոքին
պէս է ։
3 Քու երկու տիտիդ նման են երկու ուլերու ,
Որ այծեամի մը երկուորեակ ձագ են ։
4 Պարանոցդ փղոսկրէ աշտարակի պէս է ։
Աչքերդ Եսեբոնի բամբարբերի դրանը քովը
Եղող աւազաններուն կը նմանին ։
Ունդդ դէպ ի Դամասկոս նայող Լիբանանին
աշտարակին պէս է ։
5 Գլուխդ քու վրադ կարմիզոսի պէս ,
Եւ գլխուդ հիւսուածը ծիրանիի պէս է ։
Թագաւորը ի՛ս խոզոպիքներուդ կապուած է ։
6 Որչափ գեղեցիկ և որչափ քաղցր ես ,
Իմ փափկասիրտ սիրուհիս ։
7 Քու հասակդ արմաւենիի՝
Ու տիտիքներդ ողկոյզներուն կը նմանին ։
8 Ըսի , Կ՚ելլամ արմաւենին վրայ ,
Անոր ճիւղերուն կը բռնեմ ։
Եւ քու տիտիքներդ՝ խաղողի ողկոյզներու պէս ,
Ու հոտդ հոսող խնձորներու հոտի պէս ըլ-
լայ ։
9 Եւ քու բերանդ ազնիւ գինիի պէս է ,
Որ շիտակ կը վազէ իմ սիրականիս ,
Ու քնացողներուն ‡շրթունքները կը խօս-
ցընէ ։"

* Կամ՝ գաղաադեան ։
† Կամ՝ պատեցները
‡ Կամ՝ շրթունքնե-
րուն վրայ կը կա-
թի ։

10 Ես իմ սիրականին եմ,
Եւ Նաեւ բաղձանքը ինձի է.
11 Եկուր, իմ սիրականս, դաշտը ելլենք,
Գիւղերը գիշերու մէջ անցընենք.
12 Առտուանց կանուխ այգիները երթանք,
Ու տեսնենք թէ որքա՛ն ծլե՛ր է, ծաղիկը բացուե՛ր է,
Եւ նռնենիները ծաղկե՛ր են.
Հոն իմ սէրս քեզի տամ.
13 Մանդրագորները հոտ են տան.
Ու մեր դուռերուն մէջը՝
Ամէն ընտիր պտուղներէն՝ թէ նոր և թէ հին,
Քեզի համար պահեր եմ, ով իմ սիրականս.

ԳԼ. Ը

1 Եկեղեցիին սերը քրիստոսի վրայ. 8 Սիրոյ ուժգնութիւնը. 8 Հեթանոսները կոչուիը. 14 Եկեղեցին քրիստոսի գալուն համար կ'աղօթէ.

1 Երանի թէ իմ մօրս ստինքը ծծած եղբօրս պէս ըլլայիր.
Երբո՛ր քեզ գուրսը գտնէի՝ պիտի համբուրէի,
Եւ ալ պիտի չանարգէին.
2 Քեզ առաջնորդելով իմ մօրս տունը կը տանէի,
Որ ինծի °սորվեցընես.
Քեզի -հոտաւէտ գինիէն՝ իմ նռնենիիս օշարակէն կը խմցընէի.
3 Ձախ ձեռքը գլխուս տակը,
Ու աջ ձեռքը զիս կը գրկէր.
4 Ովվ երուսաղէմի աղջիկներ, ձեզ կ'երդմնցընեմ,
Որ չարթնցընէք ու չվերցընէք,
Մինչև որ ինքը չուզէ.
5 Ո՞վ է ասիկա որ իր սիրականին կռթնած՝ Անապատէն կ'ելլէ.
Քեզ խնձորենիին տակը արթնցուցի.
